տեառն։ Վասն հայր մաշտոցին յայտ լիցի, զի հոգացայ յոյժ այսր անդր հարցանելով, և անհնարին եղև գտանել զնա աստ. այլ գտանի ասեն՝ այն ի վանս ինչ արևելից՝ յանկիւրիայ, և յայլ տեղիս։ Իսկ զտպագրեալ հասարակ մաշտոցն, զոր ունիմք և մեք ի վանս, վաճառեն յոյժ ծանրագին։... Բաց ի թղթոյ անտի բառգրքին ստեփան վարդապետին ոչ գոյ աստ, այլ ի լեհ գտանի։ (Հ. Իգնատիոս առ Մելգոնեան, 1756 մայիսի 17. Կ. Պոլիս)։

ՃԿԵ.

Զմի թուղթ օրինակի բառգրքին Ստեփան վարդապետին առաքեցի ձեզ ընդ հայր Գէորգ Վարդապետին։ Զձեր խնդրեալ հայոց զհայր մաշտոցն ստէպ հարցեալ այսր անդր ոչ ուրեք գտաք, բայց գտանի ասացին զայն ի վանս հայոց յարևելս յանկիւրիայ, և այլուր. և զայն ևս ոչ տան արտաքս, որպէս լուաք յոմանց։ Սակայն աստ գտի միայն զեպիսկոպոս օրհնելոյ կարգն, զթագաւոր և զեկեղեցի օրհնելոյ. և ոչ գոյ ինձ ժամանակ օրինակելոյ զայն։ (Հ. Իգնատիոս առ Հ. Սիմոն [Կ. Պոլսեցի Աստուածատրեան], 1756 մայիսի 17. Կ. Պոլիս)։

ՃԿԶ.

Ցաւուրս յայսոսիկ առեալ զնորընծայս գնամք ի Նովենթայ ի զբօսանս։ Սկսաք չինել զտօլապն գրքատան փառաւոր։ Տուաք ևս չինել ի վերայ կարեաց սենեկաց զայլ նոյնչափ տեղիս, յոր մտեալ լինի ի վերին սրահէն, և ի վերայ այնորիկ թարաց, տեղի զբօսանաց, որպէս էր հին թարացն առաջի մեծ պատուհանին, զոր աւերեաց լուսահոգին և զայլ փոքր չինեաց։ (Մելգոնեան առ Հ. Միքայէլ, 1756 յունիսի 5. [Ս. Ղազար])։

ՃԿԷ.

Արդ էնջիքլիքան աստ սկսաւ տպել ի փրօփականտա 1756 ի մայիսի 17։ Դեռ հրաման է ի պապէն որք ամենայն ազգք յեկեղեցին իւրեանց պատարագեսցեն և ոչ ի լաթին, որպէս ես այժմ պատարագեմ ի մեր եկեղեցին ի մայիսի 18։ (Մեսրոպ եպս. Գեռանեա Արապեան առ Մելգոնեան, 1756 յունիսի 8. [Հռոմ])։

ՃԿԸ.

Զվէմն մարմարոնեայ երկաթագիր տառիւք չքնաղս քանդակեալ, և զքանդակսն սեւափայլ դեղովք լցեալ՝ եդաք ի ճակատ եկեղեցւոյս ի յիշատակ յաւիտենական առ յապայ եկելոցն։ Այլ ի լրումն պատմութեանս և զվիրգիլեանն բանահիւսութիւն զ ի նմա քանդակեալն աստէն տողեցից. «Եկեղեցիս փոքրակառոյց՝ Լուսաւորչին հոգւոց մերոց, յիշատակ է ազգիս հայոց. յիւրեանց արդեանց ւ ստացուածոց, պէլրղատի հատուածական ի նայիսօ պանդխտելոց»։ (Հ. Յովհաննէս վրդ. առ Հ. Անդրէաս, 1756 յուլիսի 23. [Նայսոց?])։

ՃԿԹ.

Կալլիացին ընդ արծուոյն դաշնադրեալ է բազում մասամբ և պայմանօք, ուստի արծիւն այժմ ոչ է ընդ անկլային, մանաւանդ ներհակ ևս է նմա. մօսկւա ևս է ընդ սոսա։ Կալլիացին դուստր տալոց է արծուոյ որդւոյն, և դեռ չէ տուեալ։ Արծիւն ընդ պրուշին գրգռեալ է ի մարտ, օգնական ունելով իւր ի Կալլիացւոյն իբր յիսուն հազարից։ Եւ ընդ այս պայմանադրութիւն յահի են եւ-